

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/5

27 հուլիսի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Սասուն Գրիգորյանի 18.07.2012թ. թիվ 02 և 19.07.2012թ. գրություններով բերված գանգատը 13.06.2012թ-ի հարկ վճարողի խոչընդոտող գործողությունների մասին թիվ 1 արձանագրության ու «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 19.07.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 196305 որոշման դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագրի, Ա/Ձ Սասուն Գրիգորյանի մոտ կատարվել է «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 16.12.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Մասնավորապես, հարկային տեսուչ Բագրատ Մուրադյանի կողմից 13.06.2012թ. ժամը 17:50-ին ք.Հրազդան, Կենտրոն 29/3 հասցեում գործող խանութից գնվել է 1 շիշ «Վերնաշեն» տեսակի գինի 1550 դրամ արժողությամբ և մեկ հատ պլոխեթիլենային տոպրակ 50 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Սասուն Գրիգորյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:58-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն՝ 2660 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, ներառված չի եղել: Սակայն, <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո ստուգող հարկային ծառայողների հետագա գործողությունները խոչընդոտվել են, որի հետևանքով կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, չի մուտքագրվել ՀԴՄ: Մասնավորապես, Ա/Ձ Սասուն Գրիգորյանի կողմից չի տրամադրվել ՀԴՄ-ից դուրս բերված <Z> հաշվետվությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագրի համաձայն իրականացվող ստուգման ընթացքում չեն կատարվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց օրինական պահանջները, այն է՝ չի տրամադրվել արդեն իսկ ՀԴՄ-ից դուրս բերված <Z> հաշվետվությունը, որի արդյունքում խոչընդոտվել է հարկային մարմնի աշխատանքը, ստուգումն իրականացնող անձանց կողմից 13.06.2012թ-ին կազմվել է հարկ վճարողի խոչընդոտող գործողությունների մասին թիվ 1 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշվել է հետևյալը:

Տնտեսվարող սուբյեկտը չի կատարել հարկային տեսուչ՝ Բագրատ Մուրադյանի օրինական պահանջը և չի տրամադրել արդեն իսկ ՀԴՄ-ից դուրս բերված <Z> հաշվետվությունը: Վերջինիս արարքը խոչընդոտ է հանդիսացել ստուգումն իրականացնող հարկային տեսուչների բնականոն աշխատանքին, ինչպես նաև հրաժարվել է հանձնարարագրի օրինակը ստանալուց:

Ա/Ձ Սասուն Գրիգորյանի գանգատներում նշված է, որ իր կողմից խոչընդոտող գործողություններ չեն կատարվել: Արձանագրության վերաբերյալ Ա/Ձ Սասուն Գրիգորյանը մասնավորապես նշել է հետևյալը:

Իսխատվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «ԿԱ ՊԵԿ նախագահի 255 հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունների դրույթները՝ արձանագրությունը չի ներկայացվել ոչ իմ, ոչ էլ վկաների ստորագրմանը, որոնք գոյություն ունեն և պատրաստ էին ստորագրման, արձանագրությունում նշում չկա ստորագրելուց հրաժարվելու մասին, արձանագրություն կազմելիս չեն բացատրվել իմ իրավունքներն ու պարտականությունները:

Արձանագրությունը կազմել է Հրազդանի ՏՀՏ-ի իրավաբանը, որի ազգանունը նշված չէր ստուգման հանձնարարագրում, իսկ ստորագրել են տեսուչները:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Սասուն Գրիգորյանը խնդրում է չեղյալ ճանաչել արձանագրությունը և 19.07.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 196305 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Սասուն Գրիգորյանի, վերջինիս ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում նյութեր են ստացվել Ա/Ձ Սասուն Գրիգորյանի կողմից ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները խոչընդոտելու վերաբերյալ: Ստացված նյութերի վերաբերյալ քննություն իրականացնելու, ինչպես նաև համապատասխան որոշում ընդունելու համար Ա/Ձ Սասուն Գրիգորյանը հրավիրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչություն: Գործի քննության արդյունքում 19.07.2012թ-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 76 արձանագրությունը (այսուհետ նաև թիվ 76 արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է, որ տնտեսվարող սուբյեկտը չի կատարել հարկային տեսուչի օրինական պահանջը և չի տրամադրել մինչ այդ ՀԴՄ սարքից դուրս բերված <Z> հաշվետվությունը: Արարքը խոչընդոտ է հանդիսացել իրենց լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնող տեսուչների աշխատանքի իրականացման համար: Ըստ թիվ 76 արձանագրության, արարքը պարունակում է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներ:

Թիվ 76 արձանագրությունում Ա/Ձ Սասուն Գրիգորյանը մասնավորապես նշել է, որ արձանագրվածի հետ համաձայն չէ, քանի որ ստուգում չի կատարվել, հսկիչ գնում կատարելու հանձնարարագիր չի ներկայացվել, ինչպես նաև չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալը, ղեկավարվելով <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 182.1 և 244.14 հոդվածների դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով 19.07.2012թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 76 արձանագրությունը, 19.07.2012թ-ին ընդունել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 196305 որոշումը (այսուհետ նաև որոշում), որով Ա/Ձ Սասուն Գրիգորյանը <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի համաձայն ենթարկվել է վարչական պատասխանատվության 250.000 դրամի չափով:

Ա/Ձ Սասուն Գրիգորյանն առձեռն ստացել է թիվ 76 արձանագրության ու 19.07.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 196305 որոշման 2-րդ օրինակները և իրեն բացատրվել է որոշման գանգատարկման կարգը: Դրանց վերաբերյալ առկա է Ա/Ձ Սասուն Գրիգորյանի ստորագրությունը:

Ա/Ձ Սասուն Գրիգորյանի գանգատում նշված այն պնդումների վերաբերյալ, որ արձանագրությունը չի ներկայացվել ստորագրման, արձանագրությունում նշում չկա ստորագրելուց հրաժարվելու մասին, արձանագրություն կազմելիս չեն բացատրվել իր իրավունքներն ու պարտականությունները, նշվեց հետևյալը:

Հարկ է նշել, որ արձանագրությունը կազմվել է և ստորագրվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից: Բացի այդ, արձանագրությունը ներկայացվել է Ա/Ձ Սասուն Գրիգորյանին, սակայն վերջինս հրաժարվել է այն ստորագրելուց, որի հետևանքով այն ուղարկվել է փոստային ծառայության միջոցով: Նշվածի վերաբերյալ արձանագրությունում կատարված է համապատասխան գրառում:

Ինչ վերաբերվում է թիվ 76 արձանագրությունում Ա/Ձ Սասուն Գրիգորյանի կատարված գրառմանը, որ ստուգում չի կատարվել, հսկիչ գնում կատարելու հանձնարարագիր չի ներկայացվել, ինչպես նաև չի ներկայացվել ստուգման հանձնարարագիր, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագրի Ա/Ձ Սասուն Գրիգորյանի մոտ կատարվել է < Հայաստանի Հանրապետությունում ստուգումների

կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, այլ ոչ թե ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ով սահմանված ուսումնասիրություն: Այսինքն, ՀՀ այաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4 կետով սահմանված հանձնարարագրի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագիրը ներկայացվել է Ա/Ձ Սասուն Գրիգորյանին, սակայն վերջինս հրաժարվել է դրան ծանոթանալուց և օրինակը ստանալուց:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արձանագրությունը և որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ